

ՄԱՐԳԱՐ ԽՈՉԵՆՑ ԵՐԵՎԱՆՑՈՒ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Քանալի բառեր՝ Զմյուռնիա, Ս. Պետերբուրգ, ձեռագիր, թարգմանություն, հավաքածու, արխիվ, հայատառ թուրքերեն, Նոր Կտակարան:

Գեռևս 1958 թ. Աս. Մնացականյանը «Մատենադարանի Բանբեր»-ի 4-րդ համարում հրապարակել է մի հոդված՝ «18-րդ դարում հայ-ռուսական դաշնագրային երկու նախագծերի հարցի շուրջը» խորագրով, որտեղ նշում է, որ պատրաստում է հատուկ ուսումնասիրություն՝ նվիրված «իր ժամանակի հայ իրականության մեծավաստակ և առաջադեմ հեղինակ Մարգար Խոչենց Երևանցու¹ կյանքին և գործունեությանը»: Աս. Մնացականյանի այս մտադրության մասին է ակնարկել նաև մեկ այլ անվանի գիտնական՝ Վ. Բարխուդարյանը՝ արդեն 1967 թ. լույս տեսած «Ռուսահայ առաջին տպարանը» հոդվածում²: Յավոք, մեզ առայժմ չի հաջողվել պարզել՝ արդյոք Աս. Մնացականյանն իրականացրել է իր մտահղացումը, թե՛ ոչ, քանի որ նրա տպագիր ժառանգության մեջ նման հոդված մենք չգտանք: Բարեբախտաբար, Աս. Մնացականյանի անձնական արխիվը գտնվում է Մաշտոցյան Մատենադարանում և հուսով ենք, որ մոտ ապագայում կհաջողվի լույս սփռել այս հարցի վրա³:

Մինչ այդ մենք ձեռնամուխ եղանք իրականացնելու մեր սեփական հետազոտությունը՝ նպատակ ունենալով ի մի բերել Գեղամյան Մարգար Զաքարիա Խոչենց Երևանցու կյանքի և գործունեության վերաբերյալ հայտնի բոլոր

¹ Ստորև ներկայացնում ենք Մարգար Խոչենցի անվան գրոթյան՝ մեզ հանդիպած բոլոր ձևերը՝ հայերեն, ռուսերեն և լատինատառ՝ Գեղամյան Մարգար Զախարիա (Զախարիա) Խոճենց (Խոչենց) Երևանցի, Զմյուռնեցի, Իզմիրցի, Ղախի Մարգար: Ռուսերեն՝ Маргар (Маргар, Макаp), Захария, Захарович, Хоченц (Хочайсеанц, Хоченцов), Геламский, Змюрнаци, լատինատառ՝ Marc Zacharie Chodjents d'Erivan, Keghamian of Erivan:

² Վ. Բարխուդարյան, «Ռուսահայ առաջին տպարանը», ՊՔՀ, 4, 1967, էջ 225:

³ Ներկայումս Աս. Մնացականյանի արխիվն անմշակ է և չի սպասարկվում:

տվյալները: Բացի առկա հետազոտություններից, ուսումնասիրությունը հիմնված է Հայաստանի Ազգային արխիվում, Մաշտոցյան Մատենադարանում, էջմիածնի մատենադարանում, Ֆրանսիայի, Իտալիայի, Ռուսաստանի և արտասահմանյան այլ հավաքածուներում պահվող անտիպ նյութերի վրա⁴: Որպես արժեքավոր սկզբնաղբյուր ծառայեցին նաև Մարգար Խոջենցի ձեռագիր և տպագիր ստեղծագործությունների հիշատակարանները:

Արդյունքում մեզ հաջողվեց բացահայտել և հերքել Մարգար Խոջենցի կյանքի և գործունեության վերաբերյալ իրականությունը չհամապատասխանող մի շարք պնդումներ, ինչպես նաև գիտական շրջանառության մեջ դնել նոր փաստեր:

Կենսագրություն

Մարգար Խոջենցի մահից մոտ 200 տարի անց հստակեցվեց նրա մահվան ստույգ ամսաթիվն ու վայրը՝ նա վախճանվել է 83 տարեկանում՝ 1820 թ. հունվարի 29-ին, Ս. Պետերբուրգում: Այս տեղեկությունը զետեղված է Ս. Պետերբուրգի Հայկական տան բնակիչների գրանցամատյանում⁵: Մարգար Խոջենցի հեղինակած «Կտակագիր հոգեշահ բանից»՝ խրատների ժողովածուի տիտղոսաթերթին նշված է, որ նա այն գրել է ծայրահեղ հիվանդ վիճակում՝ 1793 թ. և հասցեագրել է Զմյուռնիայում ապրող իր որդուն՝ Զաքարիային⁶: Ենթադրում ենք, որ հենց այս գրառումն է որոշ հետազոտողների համար առիթ հանդիսացել թյուրիմացաբար համարելու, որ նրա ապրած տարիները սահմանափակվել են ժ.Ղ. դարով⁷: Ինչ վերաբերում է նրա ծննդյան տարեթվին, ապա պարզ հաշվարկով, ստանում ենք 1736 կամ 1737 թթ.:

⁴ Հատուկ շնորհակալություն եմ հայտնում ՀԱԱ փոխտնօրեն Սոնյա Միրզոյանին՝ իր տրամադրած տեղեկությունների համար, Մատենադարանի գլխավոր ավանդապան Գևորգ Տեր-Վարդանյանին, Արփենիկ Ղազարոսյանին, Լուսիկ Ստեփանյանին, էդդա Վարդանյանին և Անի Ավետիսյանին, որոնց հետ խորհրդակցության արդյունքում սույն աշխատանքն ավելի բովանդակալից դարձավ:

⁵ ՀԱԱ, ֆ. 399, ց. 1, գ. 1406-141:

⁶ Կտակագիր հոգեշահ բանից ի Մարգար Զաքարիա Խոջենցի երեւանցոյ: Շարադրեալ ի հիւանդութեան իւրում մեծի եւ առաքեալ ի Զմիւտին առ որդին իւր Զաքարիա Մարգար Խոջենց, Երուսաղեմ, տպ. Ս. Հակոբյանց, 1853:

⁷ Գ. Ստեփանյան, Կենսագրական բառարան (հայ մշակույթի գործիչներ), Երևան, 1981, էջ 302: Տե՛ս նաև՝ Թ. Հակոբյան, Երևանի պատմությունը (1500-1800), Երևան, 1971, էջ 407:

Մարգար Խոջենցը ծնվել է Երևանում, ապրել Ջմյուռնիայում, ապա տեղափոխվել Ռուսաստան: Նրա այստեղ հայտնվելու կապակցությամբ, գոնե մեզ համար, խնդրահարույց վարկած է առաջարկել Ֆրանսիացի հայագետ Ժան Պիեռ Մահեն: Ըստ նրա՝ Մարգար Խոջենցը Սևանա լճի իշխանական գերդաստանի տերն էր: 1780 թվականին խնդրել է Ռուսաստանի կայսեր միջամտությունը, իսկ 1804 թ. ռուսների Կովկաս մտնելուն պես՝ ապաստանել Սանկտ Պետերբուրգում⁸: Սակայն, ըստ Լեոյի՝ «Մարգար Խոջենցն իր ընտանիքով ապրում էր Ջմյուռնիա քաղաքում, որտեղ թարգմանչի պաշտոն էր զբաղեցնում Անգլիայի հյուպատոսարանում: Այստեղ, լսելով Հովսեփ արքեպիսկոպոս Արղուժյանի գործունեությունը, ոգևորվում է և, թողնելով պաշտոնը, գնում է Ռուսաստան և իր ծառայություններն է առաջարկում Արղուժյանին: Սա հաճությամբ ընդունում է Խոջենցին և խոստանում է ն. նախիջևանի իր տպարանում տպագրել նրա գործերը: Նկատենք, որ Խոջենցն իր դաստիարակությամբ սաստիկ կրոնասեր և եկեղեցասեր էր, իսկ հայերեն լեզվի գիտություն մեջ շատ էլ վարժ էր»⁹: «Միոն» ամսագրում մի անանուն հոդվածագիր Խոջենցի թերացումը հայերենում բացատրում է տվյալ ժամանակաշրջանի մայրենիի իմացության ընդհանուր վատ մակարդակով՝ «...իւր բնիկ մայրենի հին լեզուին ալ հմուտ էր, որչափ որ կընէրէր անցեալ տասն և ութերորդ դարը, յորում կորուսեալ էր մեր ազգային դպրութիւնը, իւր առջի շքեղութիւնը ու հոյակապութիւնը, և գրեթէ գոեհիկ լեզու մի դարձած, ինչպէս հիմայ որ բոլորովին բարձի թողուած է նորելուկ ուսումնականներէն»¹⁰: Թեև նույն հեղինակը նշում է, որ Մարգար Խոջենցը բնիկ երևանցի է եղել, սակայն մենք այս փաստը հաստատող որևէ ապացույց առայժմ չունենք: Իսկ Ջմյուռնեցի մականունը, հավանաբար, ձեռք է բերել Ջմյուռնիայում՝ Անգլիայի հյուպատոսությունում որպես թարգմանիչ աշխատած տարիներին:

⁸ Ժ. Պ. Մահեն, «Նապոլեոնը և հայերը», Փարիզ, http://ysu.am/files/11G_P_Mahe.pdf էջ 5, 13.11.2018:

Յավոք, վաստակաշատ հայագետը չի նշում այն աղբյուրը, որի հիման վրա հանգել է վերոնշյալ եզրակացությանը: Վերջերս առիթ ունեցանք ֆննարկելու այս հարցը Մահեի հետ, սակայն նա այդպես էլ չմտաբերեց հավանական աղբյուրը: Միևնույն ժամանակ, մենք հակված ենք մտածելու, որ Մարգար Խոջենցի ծագման վերաբերյալ սույն վարկածը հնարավոր է շրջանառության մեջ է դրվել հիմնվելով Հայկական Սովետական Հանրագիտարանում զետեղված՝ Գեղամյանների տոհմի մասին հոդվածի վրա, թեպետև այնտեղ Մարգար Խոջենցի անունը՝ որպես Գեղամյանների այդ նյութի ներկայացուցիչ՝ չի հիշատակվում:

⁹ Լեո, *Երկերի ժողովածու*, հ. 3-րդ, 2-րդ գիրք, Երևան, 1973, էջ 557, 558:

¹⁰ Միոն, «Մարգար Զաֆարիա Գեղամեան», 1866, հ. է., էջ 106:

Մարգար Խոջենցը որոշ ժամանակ Ձմյուռնիայում զբաղեցրել է նաև Ռուսաստանի հյուպատոսի պաշտոնը՝ ինչի մասին վկայում է նրա անձին վերաբերող փոքրիկ, բայց, մեր կարծիքով, անչափ հետաքրքիր մի հաղորդում՝ Ձմյուռնիայում լույս տեսնող «Արշալույս արարատյան» թերթում՝ «Իզմիրի մէջ պատահած հին դէպք մի. Ղալճի Մարգար» խորագրով¹¹: Այստեղ նշվում է, որ Մարգարը որոշ ժամանակ ղալճիություն (գրոշմահատում) է արել, այդ պատճառով նրան նաև Ղալճի Մարգար էին կոչում: Նա բնիկ Երևանցի էր, օտար լեզուների գիտակ, խոհեմ և պատվելի մեկը՝ սիրված բոլորի կողմից: Նա մտերիմ էր Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպանի հետ, որին կոչում էին մսյո Ֆրեր: Մսյո Ֆրերը 1790 կամ 1791 թվականին այցելել է Մարգար Խոջենցին՝ առաջարկելով նրան զբաղեցնել Իզմիրում (Ձմյուռնիա) Ռուսաստանի հյուպատոսի պաշտոնը, և նա համաձայնել է: Այդ օրերին Մարգարի կինը տղա զավակ է ունենում: Դեսպանը ի նշան իր բարեկամության, ցանկություն է հայտնում դառնալ երեսայի կնքահայրը: Խոջենցի զավակին մկրտում են Իզմիրի Սբ. Ստեփանոս եկեղեցում և մեծ շուքով նշում այդ իրադարձությունը: Ինչպես կարգում ենք հողվածում, Մարգար Խոջենցը Ռուսաստանի հյուպատոսի պաշտոնում աշխատում է երկու-երեք տարի: Երբ սկսվում է Ռուս-թուրքական պատերազմը, նա ստիպված է լինում Թուրքիայից փախչել Ռուսաստան: Այստեղ ժամանակագրական անհամապատասխանություն կա, քանի որ, ինչպես հայտնի է, ռուս-թուրքական հերթական պատերազմը տեղի է ունեցել 1787-1792 թթ., այսինքն՝ Մարգարը նշանակվել է Ռուսաստանի հյուպատոսի պաշտոնին, երբ պատերազմն արդեն ավարտին էր մոտենում, այլ ոչ նրա սկզբում:

Այնուամենայնիվ, հաղորդումն արժեքավոր նյութ է պարունակում: Նախ, այստեղից պարզ է դառնում կապը Մարգար Խոջենցի Ռուսաստանում հայտնվելու և արտգործնախարարությունում պաշտոն ստանձնելու միջև: Այլպես անտրամաբանական էր թվում նրա՝ Հովհաննես Արղուիթյանին հայկական սպագրություն գործում աջակցելու նպատակով Ռուսաստան տեղափոխվելու և, միևնույն ժամանակ, Ռուսական արքունիքում ներգաղթյալների հարցերով խորհրդական («բարձր կալէկն պանդխտականաց») դառնալու փաստը: Բացի այդ, վերոնշյալ հողվածը մեզ հայտնի միակ աղբյուրն է, որտեղ հպանցիկ նկա-

¹¹ Ծնորհակալություն եմք հայտնում Մատենադարանի գիտաշխատող Միհրան Մինասյանին՝ հողվածի մասին տեղեկացնելու համար:

րագրված է Մարգար Խոջենցի արտաքինը՝ «մէկ աչքը շիւ և քիչ մը նիհար»¹²:

Ինչպէս նշում է Վ. Ա. Գիլոյանը. «Թաղեոս վարդապետ Մարուգյանից հետո Ռուսաստանում հայտնվեց նաև Մարգար Խոջենց Երևանցին, որը շնորհիվ իտալերեն, պարսկերեն, արաբերեն, թուրքերեն լեզուների իմացությունից իր ժամանակին բավական մեծ հեղինակություն և համբավ ուներ»¹³:

Մարգար Խոջենցին բարձր էին գնահատում թե՛ հայկական միջավայրում և թե՛ Ռուսական արքունիքում: Այս մասին է վկայում Ռուսաստանում հրատարակվող հայկական գրականության գրաքննիչի պաշտոնին նրա ակնկալվող նշանակման պատմությունը, ինչն, այդպես էլ չկայացավ: Ս. Արեշյանը իր «Հայ տպագրությունը և ցարական գրաքննությունը» գրքում, հիմնվելով արխիվային փաստաթղթերի վրա, գրում է, որ 1819 թ. վերջին Հովհաննես (ИОАННЕС) արքեպիսկոպոսը Հոգևոր գործերի և ժողկրթության նախարար՝ Ա. Ն. Գոլիցինին ուղղված նամակում առաջարկում է Խոջենցի թեկնածությունը Ս. Պետերբուրգում տպագրվող հայալեզու հրատարակությունների գրաքննիչի պաշտոնին, համարելով նրան «հմուտ և փիլիսոփայական գիտություններում գիտակ մարդ, ով սովոր է զանազան լեզուներից հայերեն թարգմանություններ կատարելուն»¹⁴: Մեկ այլ նամակում Գոլիցինը հայցում է Արտաքին գործերի նախարարության կառավարիչի՝ կոմս Նեսելրոդի թույլտվությունը և առաջարկում նրան ստանալ Խոջենցի համաձայնությունը: Հարցմանը կոմսը դրական պատասխան է ուղարկում և հայտնում Գոլիցինին, որ Խոջենցը պատրաստ է զբաղեցնել այս պաշտոնը՝ տարեկան 1500 ռուբլի աշխատավարձի դիմաց: Ֆինանսավորման հարցը լուծելու համար Գոլիցինը դիմում է Հովհաննես Լազարյանին, սակայն մերժում է ստանում՝ իբր Խոջենցի պահանջած աշխատավարձի չափազանց բարձր լինելու պատճառով: Բացի դրանից, Լազարյանը հայտարարում է, որ Սերոփե (Серафим) վարդապետը պատրաստ է անվարձահատույց կատարել այդ պարտականությունը: Գոլիցինը երկրորդ անգամ է դիմում Լազարյանին՝ նույն հարցով, պնդելով, որ անհրաժեշտ է Ֆինանսավորել Մարգար Խոջենցին: Լազարյանը կրկին մերժում է և բացատրում, որ դրա անհրաժեշտությունը չի տեսնում, քանի որ Ս. Պետերբուր-

¹² <http://tert.nla.am/archive/HGG%20TERT/arshaluys%20araratyan%20zmyrnia/1870/887.pdf> 23.10.2018, 5.30.

¹³ Վ. Ա. Գիլոյան, Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից, Երևան, 1966, էջ 189:

¹⁴ С. Г. Арешян, *Армянская печать и царская цензура*, Ереван 1957, с. 22.

գում հրատարակվող հայերեն գրքերը սակավաթիվ են, և այսպես թե այնպես, ենթակա են հոգևոր, և ո՛չ թե աշխարհիկ, գրաքննության. ուստի դրանք ուղարկվում են էջմիածին՝ եփրեմ պատրիարքին, ինչից հետո միայն տպագրության թույլտվություն ստանում: Մինչ ընթանում էր սույն նամակագրությունը, հոջենցը վախճանվեց: Ըստ Ս. Արեշյանի՝ մերժելու իրական պատճառն այլ էր՝ Լազարյանը չէր ցանկանում այս խնդրի պատճառով փշացնել իր հարաբերությունները կաթողիկոսի հետ, որին, ըստ ամենայնի, դուր չէր գա աշխարհիկ գրաքննիչի ֆինանսավորումը: Այնուամենայնիվ, Մարգար հոջենցի կեցությունը Ս. Պետերբուրգի Հայկական տանը ապահովվում էր Լազարյանների ընտանիքի միջոցներով, ինչի մասին վկայում են ծախսամատյանները¹⁵:

Ստեղծագործությունները

Մարգար հոջենց Գեղամյանի ստեղծագործական ժառանգությունը բազմաբնույթ է: Շնորհիվ մի շարք եվրոպական և արևելյան լեզուների իմացության (անգլերեն, ֆրանսերեն, իտալերեն, հունարեն, ռուսերեն, պարսկերեն, թուրքերեն, արաբերեն), նա կատարել է տարաբնույթ թարգմանություններ, ինչպես նաև խմբագրել և հրատարակության է պատրաստել ձեռագրեր, հեղինակել սեփական երկեր: Մեզ են հասել Հայաստանի, Ռուսաստանի, Ֆրանսիայի, Իտալիայի հավաքածուներում պահվող՝ նրա անվան հետ առնչություն ունեցող մի շարք ձեռագրեր և տպագիր գործեր: Ըստ այդ ժառանգության, կարելի է եզրակացնել, որ Մարգար հոջենցին հետաքրքրող խնդիրների շրջանակը բավականին լայն էր՝ փիլիսոփայություն, կրոն, երիտասարդ սերնդի կրթությունն ու դաստիարակությունը, ինչպես նաև հայոց ճակատագիրը:

Նախ և առաջ համառոտ ներկայացնենք հոջենցի հեղինակած արաբերենի քերականությունը: Հավանաբար, հայալեզու ուսանողների համար արաբերենի քերականության դասագիրքը Մարգար հոջենցը կազմել է Զմյուռնիայում, Անգլիայի հյուպատոսությունում թարգմանիչ աշխատելու շրջանում: Դասագրքի երկու ձեռագիր գտնվում է Մատենադարանում (ՄՄ ձեռ. Հ^մ 2323 և ՄՄ ձեռ. Հ^մ 6270): Ըստ հիշատակարանի՝ ՄՄ Հ^մ 2323 ձեռագիրն ինքնագիր է, արտագրված Ս. Պետերբուրգում, 1810 թ.՝ 1766 թ. Զմյուռնիայում գրված բնօ-

¹⁵ ՀԱԱ, ֆ. 1389, ց. 1, գ. 14:

րինակից (թ. 4բ): Այս ձեռագիրը նախատեսված էր ուսաց կայսր Ալեքսանդր Պավլովիչին (Ալեքսանդր Ա, 1801-1825 թթ.) նվիրելու համար: Ինչպես նշված է «Ընծայման» մեջ, հեղինակն ակնկալում է, որ կայսրը կկարգադրի այն թարգմանել ուսերեն: Խոջենցն առաջաբանում՝ «Առ բանասէր ընթերցողս», նշում է, որ եվրոպացիների հաջողությունները գիտության և արհեստների բնագավառում պայմանավորված են «ո՛չ այլով... բայց եթէ տեղեկութեամբ, թարգմանութեամբ եւ ընթերցմամբ գրեանց զանազան ազգացն լեզուաց»¹⁶: Ապա հեղինակն իր մտահոգությունն է հայտնում, որ հայերը, սփռված լինելով աշխարհով մեկ, ընդ որում՝ մեծ մասամբ Արևելքում, թեև վարժ տիրապետում են եվրոպական լեզուների, սակայն արաբերենի առումով թերանում են: Իսկ պատճառն այն է, որ գրեթե չկա այս լեզվի քերականության որևէ գիրք, որը հայ ընթերցողին մատչելի կներկայացնի արաբերենի, հատկապես՝ բայի քերականական կարգերը. «...որքան որ անթերի եւ անվրէպ փոխաբերեալ էին ի լեզուս իւրեանց, սակայն ի խոնարհմունս բայից հետեւեալ էին նոցունց դասակարգութեանց, որք են ըստ ամենայնի անհամաձայնք մերոց եւ իւրեանց եւրոպէացւոց քերականական ոճից, այսինքն՝ Վառնափնիթոր (բնագրում) եւ շփոթեալ գոլով յեղանակս եւ ի ժամանակս, ի դէմս եւ ի սեռս արականաց եւ իգականաց, նաեւ յեզականս, յերկաւորականս եւ յոքնականս, ի կրաւորականս եւ ի ներգործականս, եւ գրեթէ ի բոլոր խոնարհեցմունս նոցին (որպէս եւ տեսանելոց էք յառաջիկայս գրեցեալ յիւրում տեղւոջ՝ հանդերձ պատճառաւն), որք եւ առբերէին կարի մեծ իմն դժուարութիւն եւ ժամանակի տեւողութիւն նորակիրթ ուսանողաց»¹⁷:

Ուստի, Խոջենցն իր առջև խնդիր է դնում՝ լրացնելու այս բացը և 1766 թ. Զմյուռնիայում ավարտին է հասցնում աշխատանքը՝ «ի վայելումն իր ազնվական ազգի ուսումնասեր հանճարների»: Վստահաբար կարելի է ասել, որ Խոջենցը հասել է իր նպատակին: Մանրակրկիտ ուսումնասիրության արդյունքում համոզվեցինք, որ շարադրանքի ու հեղինակի կիրառած մեթոդի շնորհիվ «Գիրք քերականութեան արաբացւոց»-ը թույլ է տալիս լիարժեք սովորել արաբերեն, այն մատչելի է նաև լեզուն ինքնուրույն ուսումնասիրողների համար: Զեռագրի շարադրանքն ու ձևավորումը հուշում են, որ այն սուպրատիվյան համար պատրաստված օրինակ է: Այս աշխատությունը հայ սուպրատիվ գրքի մատե-

¹⁶ ՄՄ ձեռ. Հ^մ 2323, ք. 4բ:

¹⁷ ՄՄ ձեռ. Հ^մ 2323, ք. 4ա:

նագիտություններում հիշատակված չէ, և մեզ համար դեռևս անհայտ պատճառներով այդպես էլ անտիպ է մնացել:

«Գիրք քերականութեան արաբացուց»-ի ևս մեկ օրինակ պահվում է Ֆրանսիայի ազգային գրադարանում: Այն նույնպես ինքնագիր է, արտագրված Ս. Պետերբուրգում (1811 թ.): Ըստ նախաբանի՝ ձեռագիրը նվիրվում է Ֆրանսիայի կայսր Նապոլեոն I-ին, իսկ ստացողը՝ Փարիզի Արևելյան լեզուների դպրոցի դասախոս Շահան Զրպետյանն է (Փրզ. հայ ձեռ. Հ^մ 297)¹⁸:

Յավոք, տեղեկություն չունենք այն մասին, թե ինչ ծավալով է կիրառություն մեջ եղել Մարգար Խոջենցի «Գիրք քերականութեան արաբացուց»-ը, սակայն կարող ենք եզրակացնել, որ գոնե Թիֆլիսում, 1823 թ. այն պահանջված է եղել, քանի որ կրկնօրինակվել է այնտեղ՝ Ներսես արքեպիսկոպոսի հրամանով (տե՛ս ՄՄ ձեռ. Հ^մ 6270): Այսպիսով, Մարգար Խոջենցին՝ Գևորգ դպիր Պալատեցու¹⁹ հետ մեկտեղ իրավացիորեն կարելի է համարել հայ արաբագիտության հիմնադիրներից մեկը²⁰:

ԺԸ. դարում հայ թարգմանչական գրականության մեջ ի հայտ է գալիս մի նոր երևույթ՝ կրոնափրկիստոփայական աշխատությունների կողքին սկսում են հայտնվել նաև աշխարհիկ ստեղծագործությունների թարգմանություններ²¹: Այս գործերից մեկը պատկանում է Մարգար Խոջենցի գրչին, որն առաջին անգամ հայերեն է թարգմանել Ֆրանսիացի հայտնի գրող, աստվածաբան և մանկավարժ Ֆրանսուա Ֆենելոնի «Պատմութիւն Թելեմաքի, որդւո Յուլիսի» վեպը: Այս գիրքն առաջին անգամ անանուն լույս է տեսել 1699 թ., ինչից հետո հեղինակի հանդեպ ճնշումներ սկսվեցին, քանի որ Ֆրանսիական արքունիքը այս վեպում կուղղովիկոս XIV թագավորի քաղաքականության քննադատության տարրեր էր տեսնում: Հետագայում, հեղինակի մահից հետո, 1717 թ. այն վե-

¹⁸ R. H. Kévorkian, A. Ter-Stepanian, *Manuscrits arméniens de la Bibliothèque nationale de France, Catalogue, avec le concours de B. Outtier et de G. Ter-Vardanian*, Paris, 1998, pp. 849-851.

¹⁹ Գևորգ դպիր Պալատեցի Տեր-Հովհաննիսյան (1737-1812), հեղինակել է «Քերականութիւն արաբացիոց լեզուին» (1765 թ.): Ձեռագրի մեկ օրինակ արտագրված 1865 թ. գտնվում է Կ. Պոլիսի Հայոց պատրիարքարանի գրադարանում (ձեռ. 183):

²⁰ Այս թեմային մանրամասն անդադարձել ենք Արամ Տեր-Ղևոնդյանի 85 ամյակին նվիրված միջազգային գիտաժողովին: Տե՛ս Ք. Սահակյան, «Արաբերենի առաջին հայերեն դասագրքերը», *Հայաստանը և արաբական աշխարհը՝ պատմություն և արդի խնդիրներ*, Երևան, 2014, էջ 115-122:

²¹ Առ, էջ 583:

րահրատարակվեց: Իր ժամանակի գրասերների շրջանում այն մեծ պահանջարկ ուներ: Այս մասին է վկայում վիճակագրությունը՝ «Պատմութիւն Թելեմաքի, որդւո Յուլիսի» վեպը 150 տարվա ընթացքում միջին հաշվով վերահրատարակվել է տարին մեկ անգամ և երկու տարին մեկ թարգմանվել տարբեր լեզուները²²: Խոջենցի հեղինակած առաջին հայերեն թարգմանությունն իրականացվել է 1790 թ. և հրատարակվել երկու մասերով՝ Թաղևոս վարդապետ Մարուքյանի խմբագրությամբ և Հովսեփ Արղուժյանի աջակցությամբ, Ն. Նախիջևանում, համապատասխանաբար՝ 1793 և 1794 թթ.: Ինչպես նշում է թարգմանության հեղինակը, նա օգտվել է թե՛ Ֆրանսերեն բնագրից և թե՛ իտալերեն տարբերակից²³, ինչի հետևանքով էլ, հավանաբար, հայերենով հեղինակի անունը հնչում է Ֆրանչեսկո (իտալերեն Francesco) և ոչ թե Ֆրանսուա (ֆրանսերեն François): Առաջաբանում Խոջենցը գրում է, որ «Թելեմաքը» արդեն թարգմանվել է զանազան լեզուների, հրատարակության է պատրաստվում նաև ռուսերեն տարբերակը և ինքն «ամաչում է», որ հայ ընթերցողը դեռևս ծանոթ չէ եվրոպայում այդքան հանրահայտ ստեղծագործությանը: Դա էլ դրդել է իրեն իրականացնել սույն թարգմանությունը՝ երիտասարդությանը լուսավորելու և ճաշակը դաստիարակելու նկատառումով: Հետագայում Խոջենցի այս գործը մասնագետները քննադատել են «ծանր լեզվի» համար, սակայն Լեոն այն համարում է բարձր ճաշակի դրսևորում, իսկ լեզվի «ծանրությունը»՝ Թ. Մարուքյանի խմբագրման հետևանք²⁴: Ֆենելոնի «Թելեմաքը» հետագայում հայերեն թարգմանվել է ևս երեք անգամ:

Մարգար Խոջենցը թուրքերենից հայերեն է թարգմանել և մեկնաբանել Ժ. դ. թուրք միստիկ Վեյսի էֆենդիի Գուշակությունների գիրքը՝ «Թարգմանություն և մեկնություն գուշակության բանից Վեյսիի...»: Ուշագրավ է, որ հիմնվելով այս աշխատության վրա, նա կանխատեսել է Օսմանյան կայսրության մոտալուստ փլուզումը, Ղրիմի անջատումը, ինչպես նաև հայերի ազատու-

²² **Th. M. Van Lint**, “The Prophecy of Liberation: Margar Xocenc‘ Erewanc‘i and Catherine the Great’s Conquest of the Crimea (1783). A Paragraph in the History of the Armenian Church in Russia”, in *Het Christelijk Oosten / The Christian East*, 2000 (3-4), p. 269-309; **A. Levi**, *Guide to French Literature: Beginnings to 1789*, Detroit etc, 1993, p. 289.

²³ **Ա. Ենոբյան**, «Ռուսահայ առաջին տպարանի հրատարակությունները եւ դրանց նկարագարով ման առանձնահատկությունները», *ԲՄ*, հ. 25, 2018, էջ 117: Նշվում է, որ Մ. Խոջենցն այն փոխադրել է իտալերեն քարգմանությունից:

²⁴ **Լեո**, էջ 584:

մը իսլամի լծից: Եվ այս ակնկալիքները կապվում էին Ռուսաց Եկատերինա II կայսրուհու (1762-1796 թթ.) անվան հետ: Հայտնի հայագետ Թեո Մ. Վան Լինտը մանրակրկիտ ուսումնասիրություն է հրապարակել՝ նվիրված Խոջենցի այս աշխատությունը՝ իր «Ազատագրման կանխագուշակում» հոդվածում²⁵: Ավելացնենք, որ բացի Վան Լինտի նշած՝ Մատենադարանում պահվող 6 ձեռագրերից (ՄՄ ձեռ. Հ^մ 2048, 2749, 6297, 9035, 9608, 1003), գոյություն ունի առնվազն ևս երկուսը՝ մեկը գտնվում է Էջմիածնում (ձեռ. Հ^մ 207)²⁶, մյուսը՝ Փարիզում, Ֆրանկյան հավաքածուում (MAF, ձեռ. Հ^մ 67)²⁷:

Հաշվի առնելով որոշ խնդրահարույց հրապարակումներ՝ Մարգար Խոջենցի թարգմանած հայատառ թուրքերեն նոր Կտակարանի վերաբերյալ, մանրամասն անդրադառնանք այս խնդրին:

Հայատառ թուրքերեն գրականությունը սկզբնավորվել է դեռևս ԺԳ դարում՝ Օսմանյան կայսրության հաստատման առաջին իսկ շրջանում: Այն ծառայել է թուրքախոս հայերի հաղորդակցման, միևնույն ժամանակ՝ նաև ազգային ինքնության պահպանման համար: Պահպանվել են աշուղական, բանահյուսական, գեղարվեստական, հոգևոր և կրոնադավանաբանական, պատմական, գիտություն տարբեր բնագավառների վերաբերող ձեռագրեր, տպագիր գրքեր, ինչպես նաև հայատառ թուրքերեն մամուլի հարուստ հավաքածու:

Հ. Փափազյանը նշում է, որ հայոց գրերի բացառիկ կատարելությունն ու հարուստ հնչյունային համակարգը թույլ է տալիս գերազանց կերպով արտահայտել թուրքերեն բոլոր հնչյունները: Այդ իսկ պատճառով անգամ Ի. դարի սկզբներին որոշ առաջադեմ հայացքների տեր թուրք գործիչներ հանդես են եկել արաբական տառերը հայկականով փոխարինելու առաջարկությամբ²⁸:

Վերոհիշյալ գրական ժառանգության մաս է կազմում Մարգար Խոջենցի՝

²⁵ Th. M. Van Lint, op. cit.

²⁶ «Էջմիածին» ամսագիր, Ը-Թ, 1964 թ., էջ 62:

²⁷ Շնորհակալություն էրդա Վարդանյանին՝ իր կազմած դեռևս անտիպ ցուցակից տեղեկությունը մեզ արամադրելու համար: Այս ձեռագիրը հիշատակում է նաև **Ժան Պիեռ Մանեն**՝ նշված հոդվածում (տե՛ս ծ. 8) և Կիմ Բակշին՝ **К. Бакши, Духовные сокровища Арцаха, Москва, 2012, с. 182:**

²⁸ **Հ. Փափազյան**, «Մեսրոպատառ այլալեզու գրականության մասին», *ԲՄ*, հ. 7, 1964, էջ 212: Հայատառ թուրքերեն գրականության մասին տե՛ս նաև՝ **Հ. Ստեփանյան**, *Հայատառ թուրքերեն գրքերի և հայատառ թուրքերեն պարբերական մամուլի մատենագիտություն (1727-1968)*, Ստամբուլ, 2005: Նույնի՝ *Յուցակ հայերեն ձեռագրերի հայատառ թուրքերեն նրվերի և հայատառ թուրքերեն ձեռագրերի*, Երևան, 2008:

առաջին անգամ հայերենից թուրքերեն թարգմանած և 1819 թ. Ս. Պետերբուրգում հրատարակված «Նոր Կտակարանը»: Այն թուրքախոս հայերի շրջանում շրջանառության մեջ է եղել մինչև ԺԹ. դ. կեսերը:

Բրյուս Պրիվրատսկին Աստվածաշնչի թուրքերեն թարգմանություններին նվիրված իր աշխատության մեջ նշում է, որ թուրքերեն Աստվածաշնչի առաջին թարգմանիչն է եղել ստրուկ Վոյչեխ Բոդովսկին (*Wojciech Bodowski*), որը հայտնի էր Ալի Բեյ (*Ali Bey*) անվամբ: Նա թարգմանությունը կատարել է 1662-1665 թթ., իսկ առաջին տպագիր թուրքերեն Աստվածաշունչը լույս է տեսել 1819 թ. Փարիզում: Ըստ Պրիվրատսկիի՝ հետագայում հույներն ու հայերը օգտվել են այս թարգմանությունից՝ իրենց այբուբենով թուրքերեն Աստվածաշունչը շարագրելու համար²⁹: Այս տեսակետը, սակայն, հակասում է փաստերին: Այսպես, 1819 թ. Ս. Պետերբուրգում լույս տեսած օրինակի տիտղոսաթերթին նշված է, որ թարգմանությունը կատարվել է հայերենից. «Րապպիմիդ Յեսու էլ Մէսիհին Յահտ ի Ճէտիտ. Այսինքն Նոր Կտակարան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի... Թարգմանեալ ի հայկական է ի թուրքաց բարբառ ի Գեղամեան Մարգար Զաքարեայ Խօճէնց երևանցույ: Ս. Պետերբուրգ (Պետրոպոլիս): տպ. Հովսեփ Հովհաննիսյանի 1819»³⁰:

Երկրորդ՝ ինչպես նշում է Պրիվրատսկին, «Նոր Կտակարանի» թուրքերեն առաջին հրատարակությունը լույս է տեսել 1819 թ. Փարիզում: Քիչ հավանական է, որ նույն տարում հնարավոր էր, որ Խոջենցը հասցներ հայատառ թուրքերենով վերաշարագրել և հրատարակել իր տարբերակը՝ օգտվելով Պրիվատսկիի նշած օրինակից:

Պրիվատսկիի աշխատության մեջ սա միակ անտրամաբանական և անարժանահավատ պնդումը չէ: Նա գրում է, որ հայատառ թուրքերեն «Նոր Կտակարանը» 1819 թ. հրատարակվել է Ս. Պետերբուրգի Աստվածաշնչային ընկերակցության (*Bible Society*) կողմից, թարգմանիչն է ոմն Սերաֆիմ Խոջենցին (*Seraphim Khojenti*), որն, ըստ նրա, Խոջենցից էր (*Khojend*, Տաջիկստան) հայ եկեղեցու վանահայր կամ վարդապետ էր: Բացի այդ, ըստ նրա, մեկ այլ

²⁹ **B. G. Privratsky**, *A History of Turkish Bible Translations Annotated Chronology with Historical Notes and Suggestions for Further Research*, 2014, p. 2. <https://historyofturkishbible.files.wordpress.com/2014/03/turkish-bible-history-version-s-in-preparation.pdf> 6.03.19.

³⁰ **Հ. Դավթյան**, *Հայ գիրքը 1801-1850 թթ., Մատենագիտություն, խմբ. Հ. Անանյանի*, Երևան, 1967, էջ 92:

աղբյուրում նշված է, որ այդ հոջենցին եղել է Ռուսաստանի կառավարության թարգմանիչը³¹: Ապա, 1822 թ. այս թարգմանությունը վերամշակել և հրատարակել է ոմն Կեղամյան Երևանցի (*Keghamian of Erevan*) հայոց պատրիարքի (Կ. Պոլիս³²) երաշխավորությամբ: Մինչդեռ գրքի տիտղոսաթերթին հստակ գրված է, որ այն հրատարակվել է Հովսեփ Հովհաննիսյանի տպարանում՝ «Ի Հայրապետութեան» Սրբոյ էջմիածնի Տ[եառ]ն Եփրեմայ՝ Սրբազանկատար Կաթողիկոսի ամենայն Հայոց: Եւ յառաջնորդութեան] Ռուսաստանու Տ[եառ]ն Յօհաննու Արհի Եպիսկոպոսի և Կաւալերի: Թարգմանեալ ի հայկականէ ի թուրքաց բարբառ ի Գեղամեան Մարգար Զաքարեայ հօճէնց Երևանցոյ: Արդեամբ ռուսաց Ա[ատուա]ծաշնչի ժողովոյն, որ ի Ս. Պետերբուրգ (Պետրոպոլիս): 1819»: Ինչն է գրդել Բոյուս Պրիվրատսկուն ներկայացնել վերոնշյալ խառնաշփոթ և իրականությունը չհամապատասխանող տեղեկությունները նոր Կտակարանի հայատառ թուրքերեն առաջին հրատարակության վերաբերյալ, մեզ համար անհայտ է, և մնում է միայն ենթադրել, որ նա ծանոթ չէ բնօրինակին և իր տեղեկությունները քաղել է կասկածելի աղբյուրներից, որոնք, ի դեպ, նա չի նշում:

Մարգար հոջենցը հետևյալ գործի համար արժանացավ ինչպես գովասանքի, այնպես էլ մեղադրանքների՝ գրագողության համար: Խոսքը հայտնի «Վարդ և Սոխակ» այլաբանական թեմայով ստեղծագործության մասին է: Այն հրատարակվել է 1812 թ. Ս. Պետերբուրգում, գրաբար և ռուսերեն՝ Հովսեփ Հովհաննեսովի թարգմանությամբ: Մեզ հայտնի է ևս երեք հրատարակություն: Փարիզում, 1826 թ., լույս տեսած տարբերակի տիտղոսաթերթին նշված է, որ այն ֆրանսերեն է թարգմանել Արևելյան լեզուների դպրոցի հայերենի ուսուցիչ Լը Վայան դը Ֆլորիվալը, սակայն ֆրանսերեն տարբերակը կցված չէ: Իսկ արդեն 1832 թ. ստեղծագործությունը լույս է տեսել երկու լեզվով՝ հայերեն և ֆրանսերեն, և 1833 թ.՝ առանձին ֆրանսերեն հատորով: Հետագայում, Արշակ Չոբանյանի խմբագրությամբ Փարիզի «Անահիտ» հանդեսում մի քանի մասով հրատարակվել է վրպակի աշխարհաբար թարգմանությունը (1898-1900 թթ.)³²: Սակայն, վերջին մասը հրատարակելուց առաջ Չոբանյանը հերքել է Մարգար հոջենցի հեղինակ լինելու փաստը: Նրա ձեռքն էր ընկել Շարլ Ժորեի «Վարդը

³¹ B. G. Privratsky, op.cit., p. 74.

³² «Անահիտ» հանդես, Փարիզ, 1898, № 1, էջ 11-14, 1899, № 4-5, էջ 176-178 և հետագա համարներում:

և Սոխակը հին ժամանակներում և միջնադարում» գիրքը³³, որտեղ հեղինակը մանրամասն վերապատմում է ԺՁ. դ. հայտնի թուրք պոետ Ֆազլի (*Fazil*) «Վարդ և Սոխակ» այլաբանական երկի բովանդակությունը, որի հետ, ըստ Չոբանյանի՝ համընկնում է հոջենցի ստեղծագործությունը: Ավելին, նա ծանոթանում է գերմանացի թուրքագետ՝ Յոզեֆ Ֆոն Համմերի հրապարակմանը՝ նվիրված նույն թեմային: Այս դեպքում հեղինակը ստույգ մեղադրանք է հնչեցնում Մարգար հոջենցի հասցեին, համարելով, որ վերջինս անհաջող թարգմանել և համառոտ ներկայացրել է Ֆազլի ստեղծագործությունը: Արդյունքում Չոբանյանը ափսոսանք է հայտնում, որ Մարգար հոջենցը, հետևելով իր որոշ նախորդների դատապարտելի օրինակին, հրատարակել է այս ստեղծագործության թարգմանությունը իբրև իր սեփական գործ՝ առանց իրական քերթողի անունը նշելու³⁴:

1879 թ. Վենետիկում, Սբ. Ղազարի տպարանում լույս է տեսնում Մարգար հոջենցի «Վարդ և Սոխակ»-ի իտալերեն թարգմանությունը: Եվս մեկ խմբագրություն՝ աշխարհաբար տպագրվել է 1950 թ., Ֆրեզնոյում, Հակոբ Պողոսյանի տպարանում: Ուշագրավ է, որ այս օրինակը վերատպված է «Անահիտ» հանդեսից և լույս է տեսել դեռևս Արշակ Չոբանյանի կյանքի օրոք: Գրքում նշված է նաև Ա. Չոբանյանի փարիզյան հասցեն, ինչը մեզ թույլ է տալիս եզրակացնել, որ այն հրատարակվել է վերջինիս գիտությունը: Սակայն նախաբանում, որը պատրաստել էր գրող և գրականագետ Վահե Հայկը, չի հիշատակվում ո՛չ Ֆազլի անունը և ո՛չ էլ «գրագողության» պատմությունը:

Յավոք, առայժմ մեր տրամադրության տակ չունենք Ֆազլի «Վարդ և Սոխակի» բնագիրը և սեփական եզրակացության համար համեմատել ենք Չոբանյանի աշխարհաբար թարգմանությունը և Ֆազլի ստեղծագործության նկարագրությունը: Իրոք, սյուժետային գիծն ու գործող կերպարները համընկնում են, և առայժմ ստիպված ենք համաձայնել քննադատության հետ: Սակայն, հաշվի առնելով այն փաստը, որ Արշակ Չոբանյանը, ինչպես ինքն է նշում հոդվածում, չի տիրապետել թուրքերենին, մեզ համար «գրագողության» հարցը բաց է մնում, և մտադիր ենք դրան անդրադառնալ հետագայում:

Մարգար հոջենցը կարևորել է «Վարդ և Սոխակ»-ի բարոյախրատական,

³³ Charles Joret, *La Rose dans l'antiquité et au Moyen Age*, Paris, 1892.

³⁴ «Անահիտ», 1900 թ., հր. 12: Տե՛ս նաև՝ Ա.Ղազիկեան, Հայկական նոր մատենագրութիւն և հանրագիտարան հայ կեանքի, Վենետիկ, 1909-1912, էջ 1195-1198:

դաստիարակչական առաքելությունը: Այն գովերգում է անշահախնդիր սերը, հավատարմությունը, հավատն ու իմաստությունը, ինչպես նաև դատապարտում է նախանձն ու ստորությունը: Եթե անգամ հոջենցի հեղինակած վիպակը ընդամենը թուրքերենից թարգմանությունն է, դա չի նսեմացնում ստեղծագործության գեղարվեստական արժեքը, իսկ իր ժամանակի համար բավական մեծ թվով հրատարակությունները՝ նաև թարգմանաբար, վկայում են նրա պահանջված լինելը:

Մաշտոցյան Մատենադարանի հավաքածուում պահվում է Հակոբ (կամ Շահամիր) Շահամիրյանի «Որագայթ փառաց»-ի 1805 թ. մի ձեռագիր (ՄՄ ձեռ. Հ^ն 1477): Այս օրինակը պատկանում է Մարգար հոջենցի գրչին, որը ոչ միայն արտագրել է Շահամիրյանի՝ Մադրասում 1773 թ. տպագրված աշխատությունը, այլ նաև, ինչպես ինքն է նշում, «հեղինակի թույլտվությամբ» գրագետ վերաշարագրել է ամբողջ բնագիրը՝ ուղղելով թե՛ քերականական և թե՛ ոճական սխալները: Նա սահմանադրության գլուխները խմբավորել է ըստ կիրառման ոլորտների, առաջին մասի ողջ շարագրանքը բաժանել է ենթագլուխների և նրանց տվել իմաստային վերնագրեր: Որպես երրորդ մաս, հոջենցը կցել է Շահամիրյանի ևս մեկ գործ՝ Մադրասի հայկական ինքնավարության կանոնադրությունը՝ «Տեսրակ, որ կոչի նշաւակ»-ը (Մադրաս, 1783): Այսպիսով, Մարգար հոջենցն ի մի է բերել և ավարտուն տեսք տվել Շահամիր Շահամիրյանի մշակած օրենքներին: Այս փաստն ինքնին և հատկապես կատարված աշխատանքի ծավալն ու հոջենցի ջանասիրությունը այս գործում թույլ է տալիս եզրակացնել, որ նա ոչ միայն համակրանքով էր վերաբերվում Հայաստանի անկախությանն ուղղված ձեռնարկվող միջոցառումներին, այլ նաև այդ գործընթացի անմիջական մասնակիցներից մեկն էր:

Վերջապես, հարց է ծագում արդյո՞ք Մարգար հոջենցի խմբագրած «Որագայթ փառացը» հրատարակվել է³⁵, և եթե ոչ, ապա ինչո՞ւ: Պատճառները կարող են լինել թե՛ տեխնիկական (այդ թվում նաև դրամական) և թե՛ քաղաքական, որոնք կարող են հետաքրքրել պատմաբաններին:

1792 թ. Նոր Նախիջևանի Աբ. հաչ եկեղեցու տպարանում լույս է տեսնում Մարգար հոջենցի «Տեսրակ համառօտ անուանեալ դուռն ողորմութեան» աշխատությունը, որտեղ պատմվում է Հովսեփ Արղուժյանի կողմից Գրիգորիո-

³⁵ Մեր ուսումնասիրած հայ տպագիր գրեթե ցուցակներում նման հրատարակություն չենք գտել:

պոլ քաղաքի հիմնադրման մասին և ներկայացվում նրա ճառը, ինչպես նաև եկատերինա II-ի՝ հայերին տված արտոնությունները:

Մեկ հոգավածի շրջանակում հնարավոր չէ ներկայացնել Գեղամյան Մարգար Զաքարիա հոջենց Երևանցու բոլոր աշխատությունները, և մենք մտադիր ենք դրանց անդրադառնալ հետագայում: Սահմանափակվենք նրա՝ այս պահին հայտնի ողջ ժառանգության թվարկմամբ: Աշխարհի տարբեր գրադարաններում և մասնավոր հավաքածուներում պահվում են նրա ինքնագիր ձեռագրեր և ընդօրինակումներ, ինչպես նաև տպագիր աշխատանքներ: Մեզ հայտնի ամենամեծ հավաքածուն Մաշտոցյան Մատենադարանում է: Այստեղ կարելի է գտնել նրա գրեթե ողջ գրավոր ժառանգությունը: Ընդհանուր թվով քսան ձեռագրերի շարքում են՝ «Կտակագիր Հոգեշահ բանից» (ՄՄ ձեռ. Հ^մ 3757), «Պատմութիւն Թելեմաքի, որդւո Յուլիսի» (ՄՄ ձեռ. Հ^մ 2907, տպագրվել է 1793 և 1794 թթ.), «Թարգմանություն և մեկնություն գուշակության բանից Վեյսի...» անտիպ աշխատության 6 օրինակ, այդ թվում՝ ինքնագիր (ՄՄ ձեռ. Հ^մ 2048, 2749, 6297, 9035, 9608, 1003) պահվում է Մատենադարանում, ևս մեկ ձեռագիր՝ էջմիածնում (ձեռ. Հ^մ 207), մյուսը՝ Փարիզում, Ֆրանկյան հավաքածուում (MAF, ձեռ. Հ^մ 67): «Որոգայթ փառաց» (ՄՄ ձեռ. Հ^մ 1477, անտիպ), «Համառօտ որպիսութիւն եկեղեցւոյ» 5 ձեռագիր, այդ թվում՝ ինքնագիր (ՄՄ ձեռ. Հ^մ 3597, 5084, 6613, 6880, 7345, տպագրվել է 1799 թ.), ևս մեկ ձեռագիր գտնվում է Ս. Պետերբուրգի՝ Ռուսաստանի ազգային գրադարանում (арм. н. с. 27⁸⁶)՝ «Հարցմունք Մարգար հոճենց Զմյուռնացիոյ եւ պատասխանիք Սերովբէ վարդապետի Պոլսեցիոյ»³⁷ (ՄՄ ձեռ. Հ^մ 9897), ևս մեկ ձեռագիր՝ Ս. Պետերբուրգի պետական համալսարանում (СПбГУ, ВФ, Ms. Cauc. 2), «Յանկ Կտակարանաց տրոհեալ յերիս մասունս» (ձեռագրի միկրոֆիլմը գտնվում է ՀԱԱ), տպագրվել է 1811 թ.: Մատենադարանում են պահվում նաև հոջենցի անտիպ աշխատության՝ «Գիրք քերականութեան արաբացւոց»-ի երկու օրինակ (ՄՄ ձեռ. Հ^մ 2323, 6270), ևս մեկ ինքնագիր օրինակ՝ Ֆրանսիայի ազգային գրադարանում (Փրզ. ձեռ. Հ^մ 297):

Մարգար հոջենցի մեզ հասած տպագիր ժառանգությունը հետևյալ

³⁶ К. Н. Юзбашян, *Армянские рукописи в петербургских собраниях, каталог*, С.-Петербург, 2005, с. 38.

³⁷ Վերագրվում է հոջենցին, սակայն համոզիչ ապացույցներ չկան:

պատկերն ունի՝ «Պատմութիւն Թելեմաքի, որդւո Յուլիսի» (1793 և 1794 թթ., Ս. Պետերբուրգ), «Բարառնական դիմառնութիւն բարոյական այսինքն՝ Րոման մօրալէ. Ի դիմաց վարդոյ և լուսինեկի, այն է պիւպիւլի...» (Ս. Պետերբուրգ, 1812՝ ռուսերեն կից թարգմանությամբ, Փարիզ, 1832՝ ֆրանսերեն թարգմանությամբ, «Անահիտ» հանդես, 1898-1890, և առանձին գրքույկով՝ Ֆրեզնո, 1950), «Նոր Կտակարան»-ի հայատառ թուրքերեն թարգմանությունը (Ս. Պետերբուրգ, 1819):

Այսպիսով, Գեղամյան Մարգար Զաքարիա Խոջենցը եղել է իր ժամանակի հայ մտավորականության վառ ներկայացուցիչներից մեկը: Նրան մտահոգել է երիտասարդ սերնդի կրթության և տեղեկացվածության մակարդակը: Նրա՝ որպես բազմակողմանի զարգացած անձնավորության մտորումները ամենազանազան հարցերի շուրջ էին՝ քրիստոնեության, իսլամի, միսսիցիզմի, գիտության, քաղաքականության, բարոյականության, ազնվության, սիրո և այլն:

KNARIK SAHAKYAN

THE LIFE AND WORKS OF MARGAR KHOJENTS՝
YEREVANTS՝I

Key words: Smyrna, St. Petersburg, New Testament, manuscript, archive, collection, translator, Armeno-Turkish.

The article is dedicated to the life and work of Margar Khojents՝, a prominent representative of the Armenian Diaspora, orientalist, translator, and linguist. It is known that Margar Khojents՝ was born in Yerevan and lived many years in Smyrna, where he worked as a translator at the British Consulate. From the end of the 18th century, Khojents՝ lived in St. Petersburg, where he served as a collegiate councilor at the Imperial Court. He knew several European and Oriental languages, was engaged in literary translation and created his own works. Khojents՝ contributed significantly to the Armenian book printing in Russia. In collaboration with Grigor Khaldaryan, Hovhannes Dolgoruky-Argutinsky, and the Lazarev family, he published his own and other authors՝ works in Astrakhan, Nor Nakhijevan, and St. Petersburg. Khojents՝ was held in high esteem both at the Imperial Court and in

the Armenian community. Yet, for the time being, his name is almost unknown. He died in 1820 in St. Petersburg at the age of 83.

On the basis of manuscripts from Matenadaran, as well as from France, Italy, and Russia, and documents from the National Archive of Armenia, we have revealed new facts about the life and work of Margar Khojents'. We have also studied several unpublished manuscripts belonging to his hand.

КНАРИК СААКЯН

ЖИЗНЬ И ТВОРЧЕСТВО МАРКАРА ХОДЖЕНЦА

Ключевые слова: Смирна, С.-Петербург, рукопись, Новый Завет, коллекция, архив, переводчик, армяно-турецкий.

Статья посвящена жизни и творчеству Маркара Ходженца - переводчика, лингвиста, востоковеда, одного из ярких представителей армянской интеллигенции. Известно, что Маркар Ходженц родился в Ереване, жил в Смирне, где работал переводчиком в британском консульстве. В конце XVIII в. он переехал в Санкт-Петербург и был назначен на должность коллежского советника при Императорском дворе. Маркар Ходженц владел несколькими европейскими и восточными языками, делал литературные переводы, сочинял собственные произведения. Он внес большой вклад в дело армянского книгопечатания в России. В результате сотрудничества с Григором Халдаряном, Иваном Долгоруким-Аргутинским и при содействии семьи Лазаревых Маркар Ходженц подготовил к печати как собственные труды, так и произведения других авторов в Новой Нахичевани, Астрахани и Санкт-Петербурге. Его высоко ценили как в армянском обществе, так и при Императорском дворе, однако нашим современникам его имя почти неизвестно. Маркар Ходженц умер в С. Петербурге в 1820 г. в возрасте 83-х лет.

В ходе исследования ряда рукописей Матенадарана, а также других коллекций Франции, России, Италии и архивных документов НАА нам удалось выявить новые факты о жизни и творчестве Маркара Ходженца, в том числе неопубликованные рукописи, принадлежащие его перу.